

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԱՂԱ ՄՈՒՀԱՄՄԱԴ ԽԱՆԻ ԱՆԿԻՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1795—1797 թթ.)», աշխատասիրությամբ Ռ. Տ. Տիտանյանի, ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, 260 էջ:

Ազա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքը դեպի Անդրկովկաս ուղեկցվում էր ավերածություններով, կողոպուտով և մասսայական գերեվարություններով: Այն Իրանի կատարած վերջին ճիգերից մեկն էր XVIII դ. երկրորդ կեսում Անդրկովկասյան խանությունների ձեռք բերած փաստական անկախությունը ճնշելու և դրանց կրկին իր տիրապետության տակ պահելու համար: Արշավանքը ճակատագրական դարձավ Անդրկովկասի և մասնավորապես՝ հայ ժողովրդի ինչպես տնտեսական կյանքի, այնպես էլ հետագա քաղաքական զարգացման հնարավորության հարցի առումով: Արշավանքը խորապես սրեց նաև ֆեոդալական ներակուլությունները Արևելյան Վրաստանում, խիստ հարվածեց նրա տնտեսությանը և ավելի շիկացրեց սոցիալական ու ներդասակարգային պայքարը երկրում: Հետևաբար, հասկանալի է այն ուշագրությունը, որ նվիրվել ու նվիրվում է Ազա Մուհամմադ խանի արշավանքների պատմության գիտական լուսաբանմանը: Այդ ավելի քան հրատապ է ներկայումս, որովհետև երբեմն երեվան են. զայիս արշավանքի ընթացքի շուրջ հակագիտական բացատրություններ, փորձելով անդրկովկասյան ժողովուրդների պարտությունը պատճառաբանել որոշ տեղացի անհատների գործունեությամբ: Չի կարելի ասել, թե մինչև այժմ քիչ աշխատանք է կատարվել այդ արշավանքների պատմությունը վերհանելու առումով, սակայն այն դեռևս իր մի զգալի մասով ու բազում մասերմասներով մնում է լիովին չբացահայտված գիտական մոտեցում պահանջող հրատապ հարցերից մեկը: Արշավանքի ըստ ամենայնի գիտական պատմության վերհանման համար, բնականաբար, ուսումնասիրությունը պետք է ընթանա արշավանքի շուրջ եղած բազմալեզու բոլոր սկզբնաղբյուրների (վավերագրերի ու պատմողական երկերի) համադիր քննությամբ, հանգամանք, որ դեռևս ի կատար չի ածվել և հիմնականում հիշյալ սկզբնաղբյուրների ցրվածության պատճառով: Հետևաբար, ողջունելի է գրախուսող ժողովածուի հրատարակ գալը, որտեղ ամփոփվել են հայերենով պահպանված տպագիր ու անտիպ գրեթե բոլոր այն վավերագրերն ու նկարագրությունները, որոնցում այս կամ այն լակով արժարծովում են Ազա Մուհամմադ խանի՝ Անդրկովկաս կատարած արշավանքների հետ առնչվող հարցերը և որոնք մինչև այժմ, ցրված լինելով տարբար պարբերականների և ձեռագիր մատյանների էջերում, իրենց ամբողջության մեջ հասու չէին ոչ միայն օտար, այլև հայ հետազոտողներին<sup>2</sup>: Քննարկվող ժողովածուն բաղկացած է ներածությունից, բնագրերից (որոնք ժողովածուի մեջ զետեղված են ժամանակագրական հաջորդականությամբ) ու ժանոթագրություններից:

Ներածության մեջ համառոտակի վեր է հանված ժամանակի քաղաքական այն իրավիճակը, որի ծնունդը հանդիսացավ նշված արշավանքը, տրված է ժողովածուի մեջ տեղ զտած հայկական սկզբնաղբյուրների ընդհանուր գնահատականը և ապա՝ ըստ ամենայնի ներկայացված առավել կարևոր դիտված բնագրերի գիտական արժեքն ու կարևորությունը և դրանց հաղորդումների հավաստիության աստիճանը: Ռ. Տիտանյանն իրավացի է, որ նշում է, թե Ազա

<sup>1</sup> Լեյցեն Ե. Ն. Կոնցիոնտ—Կոնցիոնտ 1975 Վոլոս (Հոսկոնո, 1976, № 3՝ թ. 130): Այստեղ Թբիլիսիի գրքովման ժամանակ վճռորոշ դեր է վերապահված Հ. Արատայանին: Ինչպես հայկական բնագրերում, այնպես էլ սուկա հետազոտությունների մեծ մասում ուղեացված է ներկայացվում մեծիք Մեջլումի խաղացած բացասական դերը արշավանքի ժամանակ: Ի դեպ, միանգամայն անհիմն, մեծիք Արովը ևս ներառված է Ազա Մուհամմադ խանին գործակցածների թվում՝ «Վրաստանի պատմության ակնարկներ» աշխատության մեջ (հ. IV, Թբիլիսի, 1973, էջ 760):

<sup>2</sup> Հուանք, որ նման նախածնություն կցուցաբերվի վրացական, ազրբեջանական ու տարսկական աղբյուրների համար ևս:



րիզում<sup>6</sup>, Հովհան Ոսկերչյանի «Հիշատակարանը» Ալ. Երիցյանը թարգմանել է ռուսերեն<sup>6</sup>, Հարկ է ավելացնել նաև, որ Ոսկերչյանը այն գրել է ոչ թե 1797 թ., ինչպես նշված է ժողովածուում (էջ 100), այլ՝ 1811 թ.։ Ու ապա դիտելի է, որ Հարություն Արարատյանի «Վյաննում» ևս արշավանքի թվականի մոխրումը՝ 1794 թ., սխալանակ՝ 1795 թ. (էջ 149), պայմանավորված է այս աղբյուրի թելադրանքով։

Արշավանքի պատմության ուսումնասիրության համար պակաս կարևոր չեն նաև Սարգիս Հասան-Ջալալյանցի «Պատմութիւն աշխարհին Աղուանից» աշխատության համապատասխան գլուխները։ Այս աղբյուրի արժեքը տվյալ դեպքում, ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Տիտանյանը, պարսկական զորաբանակի՝ Անդրկովկաս կառարած արշավանքի պատմության «յուրովի ընկալումներն ու ուրույն բացատրութիւններն» են (էջ 30)։

Հաչորդ սկզբնաղբյուրը, որ ներկայացված է գրախոսվող ժողովածուի մեջ, Հարություն Արարատյանի «Վյաննում»՝ արշավանքին վերաբերող հատվածներն են։ Միանգամայն հավաստի է Ռ. Տիտանյանի նկատումը, որ Հ. Արարատյանը ականատես է իր նկարագրած իրադարձություններին մի մեծ մասին միայն, այդ թվում նաև 1795 թ. Թիֆլիսի ավերմանը։ Իր դիտարկումները նա բերում է ամենայն բարեհաջողությամբ պատմական փաստերի առումով և գունավորաբար՝ հանուն գեղարվեստականության։ Նրա գրքում երբեք չեն անտեսվում աշխատավոր ժողովուրդը, նրա շահերը, կենցաղը, կրած հալածանքները և այլն։

Առանձնահատուկ կարևորություն և արժեք ունի ևս Արովյանի արխիվից Պ. Հակոբյանի հայտնաբերած ու ներկա ժողովածուում ընդգրկված Անանուն հեղինակի նամակը։ Այն, հայտնաբերողի կարծիքով, գրված պիտի լինի 1795 թ. նոյեմբերին։ Անանուն հեղինակի հաղորդմամբ սույն նամակը արշավանքի մասին նրա գրած երկրորդ գործն է Թիֆլիսի պաշտպանության հանգամանքների առավել վստահելի տեղեկություններով, որն իր հաղորդումներով տարբերվում է մեզ չհասած առաջինից։ Ինչպես ճիշտ նշում է աշխատասիրողը, ուշագրավ է հատկապես այն տեղեկությունը, ըստ որի քաղաքի բնակչության աշխատավոր տարրը համառ դիմադրություն է ցույց տվել թշնամուն, հարկադրելով նրան կռվել և զոհեր տալ քաղաքի յուրաքանչյուր տան համար» (էջ 33—34)։

Ռ. Տիտանյանը, այնուհետև, ներկայացնում և համառոտ բնութագրում ու արժեքավորում է Ղուկաս Կարենցու նամակները Աղա Մուհամմադ խանի արշավանքների մասին, որոնք ժողովածուի մի ստվար մասն են կազմում։

Ժողովածուի մեջ տեղ գտած 52 բնագրերի թվում են նաև ուղերձներ, դիմումներ, որոշումներ և այլ վավերագրեր։ Նամակներից 20-ը պատկանում են Ղուկաս Կարենցու գրչին<sup>7</sup>, 3-ը Հովսեփ Արղուբյանի հեղինակած նամակներն են, 2-ը նամակներ են՝ ուղղված Հովսեփ Արղուբյանին և այլն։ Բնագրերի մեծ մասը (ներառյալ և նամակները) հրապարակվում են առաջին անգամ՝ ձեռագրերից<sup>8</sup>։

Կասկածից վեր է, որ աշխատասիրողը ձեռքի տակ ունեցել է որոշ բնագրերի մի քանի հրատարակություններ։ Շահնական կլիներ, անշուշտ, եթե ժողովածուի վերջում կցվեր հրապարակված բնագրերի բոլոր հրատարակությունների ու արշավանքի շուրջ եղած գրականության

<sup>5</sup> Այդ առումով հետաքրքիր է Կլարկոտի նշումը, որ մեջ է բերել Առաքել Արարատյանը. «Սա (Հ. Արարատյանը—Պ. Զ.) ի Փարիզ գտանելով առաջարկեաց ինձ զժամանակագրութիւն Ոսկերչյան թարգմանել ընդ ինքեան ի բարբառ զաղղիացուց և տեսել իմ՝ թէ պարունակութիւն նոցա էր հետաքրքրական, սիրով յանձն առի զառաջարկութիւն նորա։ Ես հայերէն չգիտէի, բայց պարոն Յարութիւն բառ առ բառ թարգմանեաց ինձ զբնագրին ռուսերէն, ուստի ես փոխեցի ի լեզու գաղղիական» (Ա. Արարատյան, Համառոտ վարք եւ գրուոր գործք տեառն Յովհաննու աւագ քահանայի Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատեցույ, Տիֆլիս, 1859, էջ 27)։

<sup>6</sup> «Летопись протоиерея Тер-Огана Воскерчянци» («Кавказская старина», 1873, № 7—8, с. 192—198)։

<sup>7</sup> Ժողովածուի մեջ նամակներից մեկը վրիպմամբ կրկնված է տարբեր թվականների տակ (№ 4-ը, տե՛ս № 35)։

<sup>8</sup> Հարկ է նշել, որ Ղուկաս Կարենցու նամակներից 3-ը, որոնցից հատվածներ են բերվում ու ներկայացված են անտիպ (3, 4—35, 18), իրականում ունեցել են ամբողջական հրատարակություններ (Ս. Վ. Տեբր-Ավետիսյան, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար, «Երևանի համալսարանի գիտական աշխատություններ», հ. 13, Երևան, 1940, էջ 67—81)։

մի ամբողջական մատենագիտություն: Դա, ինչ խոսք, այս հրատարակությունը կդարձնե արշավանքի պատմության ուսումնասիրության համար մի յուրատեսակ հանրագիտարան: Միանգամայն իրավացի է Ռ. Տիտանյանը, երբ ընդգծում է, թե ասույն ժողովածուի մեջ ընդգրկված նյութերով չեն սպառվում հայկական ազբյուրները Աղա Մուհամմադ խանի արշավանքները և 90-ական թթ. իրադարձությունները պատկերող վավերագրերը: Հավանաբար, հետագա հետազոտությունները ի հայտ կբերեն նոր վավերագրեր, որոնք չեն նշվել ձեռագրաց ցուցակներում կամ այլուր (էջ 8): Նման բնագրերից մեկի գոյության մասին է վկայում Րաֆֆին իր «Խամսայի մեղիքությունները» աշխատության մեջ, որը դեռևս ամբողջությամբ հայտնի չէ գիտական աշխարհին: Փոքրիկ այն քաղվածքներն իսկ, որ կատարել է Րաֆֆին իր տողատակ ծանոթությունում, վկայում են բնագրի արտակարգ արժեքավորության մասին, և դրանք արժանի տեղ կարող էին գրավել գրախոսովոյ ժողովածուի մեջ<sup>9</sup>: Ներկայացվող ժողովածուի մեջ չեն ընդգրկվել նաև Գալուստ Երմամյանյանի գրառած Հակոբ Բհհրուչյանի հուշերը, որոնք, աշխատասիրողի իսկ նշումով, «ամծապես ազերում են մեզ հետաքրքրող խնդրի հետ» (էջ 8): Իրոք, միանգամայն ճիշտ է նշված, որ նյութի մատուցման եղանակը գրական հնարամտության տպավորություն է թողնում: Այդ հուշերը թարգմանվել են վրացերեն<sup>10</sup> ու հանախակի «գտագործվել Աղա Մուհամմադ խանի արշավանքի պատմությանը առնչվող մի շարք հարցերի լուսարանման ժամանակ<sup>11</sup>: Այդ հուշերը ըստ արժանվույն են գնահատվել և արժեքավորվել նաև ներկա ժողովածուի աշխատասիրողի մի այլ աշխատության մեջ<sup>12</sup>:

Ժողովածուն կազմված ու խմբագրված է ամենայն բարեխղճությամբ ու գիտական բարձր պատասխանատվությամբ<sup>13</sup>: Գառաջճ մակարդակով է կազմված նաև ժանտթագրությունների բաժինը: Ժողովածուի մեջ վրիպակներ գրեթե չեն հանդիպում: Ավելին, ներկա հրատարակության մեջ ուղղված են նախորդ հրատարակումների վրիպակները: Այսպես, Գ. Աղանյանցի «Դիվանում» երգծ էի գանիցս լուսքա՝ արտահայտությունը իրավացիորեն սրբագրված է օի Գանշա լուսքա (էջ 127) ճիշտ ձևով և այլն: Որքան էլ եզակի, այնուամենայնիվ, ուղղելի է կարևոր վրիպակներից մեկը. «գրի զբաղում գրեանս ի յառաջնաց այրն մերա» (էջ 127) տպվածի փոխարեն պիտի լիներ. «գտի զբաղում գրեանս յԱշառանց այրն մերա»<sup>14</sup>:

Նշված նկատառումները բնավ չեն ստվերում հայկական բնագրերի հավաքման ու ուսումնասիրման գործում Ռ. Տիտանյանի կատարած հսկայական աշխատանքը: Ներկա ժողովածուն կարևոր ներդրում է կովկասագիտական-արևելագիտական պատմագրության զանազանում և հնարավորություն կընձեռնի առավել համակողմանի հետազոտելու XVIII դ. վերջին տասնամյակների Անգրիովկասի ինչպես սոցիալ-տնտեսական ու քաղաքական, այնպես էլ մշակութային պատմության գիտական հրատարակություն ներկայացնող բազմաթիվ հարցեր:

ՊԱՎԻԿ ԳՈՐԱՆՅԱՆ

<sup>9</sup> Րաֆֆի, Երկրի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 274: Ներկա ժողովածուն կշահեր անշուշտ, եթե ընդգրկվեր Գ. Խուրովի ձեռագիր աշխատության 43-րդ պրակը՝ «Վառն աւերման Թիֆլիսու և աւարմանն զարդուց Աթոռոյն»: Այս աշխատության մասին հանգամանորեն տե՛ս 8. Վարդանյան, Գեորգ Խուրովի նորահայտ երկը իբրև XVIII—XIX դարերի Հայաստանի, հայ-ռուսական հարաբերությունների պատմության սկզբնաղբյուր («Բանբեր Մատենադարանի», № 13, Երևան, 1980, էջ 197):

<sup>10</sup> «Сборник», 1885, № 2.

<sup>11</sup> օ. Ս օ Ե յ օ Ժ ց, օղա-Յամբա-Նանոս տաջաննեմա Նախարարեղոնց, տծ., 1969; ն. Պ օ օ օ Պ ց-Ե օ օ ց, նշվ. աշխ., «Նախարարեղոն օկտոբրոս Երեզրեց», IV, տծ., 83, 762.

<sup>12</sup> Р. Титаниян, Армянские источники о нашествии Ага-Мохаммед-хана в 1795—1797 гг. (автореферат кандидатской диссертации, Ереван, 1974, с. 13—14).

<sup>13</sup> Գիրքը խմբագրել է պատմական գիտությունների թեկնածու Վ. Մարտիրոսյանը:

<sup>14</sup> Գ. Աղանյանց, Դիվան հայոց պատմության, գիրք Թ, մասն 1, Թիֆլիս, 1911, էջ 243, 509—510, ծան. 52: